Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1208 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ՝ ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ԱՊՐԱՆՔԱԽՄԲԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ԱՊՐԱՆՔԱԽՄԲԻ ԾԱԾ-ԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ՇԱՐԺԻՉԱՅԻՆ ՅՈՒՂԵՐԻ) ՄԱՍՈՎ ՎՃԱՐՎԱԾ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

1. Սույն կարգով կարգավորվում են արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռք բերված՝ ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) դասվող ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) մասով վճարված ակցիզային հարկի գումարների (այսուհետ՝ գումար) փոխհատուցման կարգի ու ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով ձեռք բերված է համարվում սույն կարգի 3-րդ կետում նշված կազմակերպությունների կողմից ներմուծված կամ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվող անձանցից ձեռք բերված սույն կարգի 1-ին կետում նշված ապրանքները:

3. Սույն կարգի իմաստով արդյունաբերական կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն) են համարվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանի հավելվածի «B», «C», «D» և «E» բաժիններում սահմանված տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունները:

4. Ակցիզային հարկի գումարները փոխհատուցվում են այն կազմակերպություն-ներին, որոնք ապրանքները կօգտագործեն բացառապես սույն կարգի 3-րդ կետում նշված գործունեության իրականացման նպատակով:

5. Ակցիզային հարկի գումարները փոխհատուցվում են սույն կարգի 3-րդ կետում նշված կազմակերպությունների կողմից կամ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվող անձանցից ձեռք բերված ապրանքների մասով:

6. Ակցիզային հարկի գումարների փոխհատուցման համար ապրանքներ ձեռք բերող կազմակերպությունը թղթային կրիչով, փոստային կապի միջոցով պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմ է ներկայացնում դիմում՝ համաձայն N 1 ձևի, ապրանքները ձեռք բերելուց կամ ներմուծելուց հետո վեց ամսվա ընթացքում:

7. Դիմումին կից ներկայացվում են՝

1) ապրանքների ցանկ՝ համաձայն N 2 ձևի, հաստատված կազմակերպության լիազորած անձի կողմից.

2) ապրանքի ձեռքբերումը հաստատող հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների ձեռքբերման դեպքում դիմումին կից ներկայացվում է մատակարարի կողմից դուրս գրված՝ ակցիզային հարկի գումարի վերաբերյալ նշում պարունակող հաշվարկային փաստաթուղթ, ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման դեպքում՝ ներմուծման հարկային հայտա-րարագիր, իսկ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծումների դեպքում՝ մաքսային հայտարարագիր.

3) ապրանքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն N 5 ձևի:

8. Դիմումը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմ մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ ուսումնասիրության:

9. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը դիմումը մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ներկայացնում եզրակացություն՝ համաձայն N 4 ձևի, դիմումատուի կողմից իրականացվող գործունեության՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանի հավելվածի «B», «C», «D» և «E» բաժիններում սահմանված տնտեսական գործունեությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ՝ կցելով դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, հարկային մարմնի տեղեկատվական բազայում այդ տեղեկատվության առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում եզրակացություն՝ համաձայն N 3 ձևի:

11. Դիմումի մերժման հիմք են՝

1) մատակարարի ներմուծողի կողմից ակցիզային հարկի գումարի վերաբերյալ հարկային մարմնի տեղեկատվական բազայում այդ տեղեկատվության բացակայությունը.

2) սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետների խախտմամբ դիմումի ներկայացումը:

12. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ ստանալով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների

կոմիտեի եզրակացությունը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում գումարները փոխհատուցում է կազմակերպությանը կամ մուտքագրում է միասնական գանձապետական հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ